եղբայրքը : Իսկ մենք ինչ ենք կատարել և ինչ պէտք է անենք, անտարբերութեամբ նրանց աւելի զործելու ասպարէզ տանք, թէ ամենայն զօրութեամբն յառաջն առնենք :

Ըստ կարելոյն աշխատած լինելով ծանօթանալ մեզ հաւատացած թեմի ներքին դրութեանը, հասել ենք այն խորին համոզմանը որ անհրաժեշտ է օր առաջ մի ամենակարեւոր պէտքն ու պահանջքն եւս լցնել հոգեւոր կերակրոյ կարօտ ժողովրդեանն, այն է քարոզի միջոցաւ ազատել մեր ժողովուրդը բողոքական միսիոնարաց որոգայթներից :

Անշուշտ պէտք է այս առնել, բայց վիճակային արդեանց սղութիւնը չէ թոյլ տալիս մեզ ուղղակի և համարձակ սկսել զործը. մենք միայնակ ժամանակ չենք գտնում, որ թէ առաջնորդական բազմաթիւ զործերն կարողանանք յառաջ տանել և թէ քարոզչութիւնն, և ընդ նմին թեմական ուսումնարանաց տեսչութեան ծանր զործերի վրայ պարապիլ յատկապէս : Ուստի դիմելով Մարզասիրական ընկերութեան ընդհանուր ժողովին, խնդրեմ ուշադրութիւն դարձնել այս կարեւոր զործոյ վրայ և մի գումար նշանակել քարոզչի համար և մտածանել զայն առաջիկայ տարուայ կանխահաշուի մէջ՝ որպէս զի հնարաւոր լինի առաջիկայ յունվարից մի քարոզիչ ունենալ թեմումս ժողովրդին միսիթարելու և զաղթոյներին նայելու : Եթէ ընկերութիւնդ յայտնէ իւր բարեհաճութիւնը՝ որոշելով այդ նպատակի համար 1000 րուբլի, մենք կարող ենք ուրիշ հնարաւոր միջոցներով եւս քարոզչի զործը դիւրացնել, ի հարկէ հանդիսաւոր տօներին և պարապ միջոց գտնելնուս ես չեմ խնայել պատահած տեղերում քարոզել, խօսիլ, խրատել ըստ պարտուց : Անկիրթայ ենք, որ այս առաջարկութիւնը՝ ընկերութիւնդ ուրախութեամբ սրտի կընդունէ՝ ի նկատի առնելով նորա բոլոր անհրաժեշտ կարիքը փութով իրագործելու :

Եկեղեցին, որ ցայսօր պահպանուել է մեր մեծագործ նախնեաց սուրբ արիւնով, պահանջում է այժմ իւր հարազատ որդիներից այդ սրբազան աւանդը սրբութեամբ պահպանելու համար չ'խնայել ոչինչ, մինչեւ անգամ թանկագին կեանքը : Եւ ոչ ապաքէն եկեղեցւոյ հարազատ որդիքը պէտք է ջանք և